

Նախամրցութային պարզաբանումներ
ՀՆՀ # 210219-01 Ինժեներական նախագծի պատրաստում Վեդի քաղաքի ոռոգման համակարգի
բարելավման ծրագրի շրջանակներում

N	Հարց	Պատասխան
1	Ինչպես ձեռք բերել DUNS համարը՝ հայտում ներկայացնելու համար:	Հայտատուի կողմից կտրամադրվի որևէ կոնտակտային տվյալ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակի կողմից էլեկտրոնային հասցե ուղարկելու համար, որտեղ անհրաժեշտ տվյալների գրանցմամբ հնարավոր կլինի ձեռք բերել DUNS համարը: Բոլոր ԱՄՆ և օտարերկրյա կազմակերպությունները, որոնք ստանում են 25,000 ԱՄՆ դոլար և ավելի բարձր արժողությամբ առաջնային պայմանագիր/գնման պատվեր կնքելու հնարավորություն, պարտավոր են պայմանագիրը կնքելուց առաջ ստանալ DUNS համար: Կազմակերպություններն ազատվում են այս պահանջից, եթե բոլոր աղբյուրներից նրանց ստացած համախառն եկամուտը նախորդ ֆիսկալ տարում ցածր է եղել 300,000 դոլարից: Նման հիմքով ազատվելու համար ME&A-ն յուրաքանչյուր հայտատուից պահանջում է ստորագրել ինքնահավաստագիր:
2	Կցանկանայինք իմանալ ի՞նչ գումարի սահմաններում է լինելու ծրագիրը:	ՀՆՀ-ում տեղադրված սխեմատիկ գծագրում պատկերված է թե որ տարածքում է նախատեսվում կառուցել ոռոգման համակարգը և ինչ աշխատանքներ պետք է իրականացվեն: Գումարի չափը կախված է ձեր առաջարկներից:

3	Արդյո՞ք ՀՆՀ-ում առկա սխեման համաձայնեցված է համայնքի հետ:	Այո, ՀՆՀ-ում տեղադրված սխեմատիկ գծագիրը մշակվել է համայնքի հետ համագործակցելով: ԳԱՏՕ ծրագիրն ունի համապատասխան գրություն, ըստ որի՝ համայնքը այս մոտեցման հետ համաձայն է:
4	Հնարավո՞ր է սխեմատիկ գծագրում նշված տարածքը փոփոխության ենթարկվի:	Վեղի քաղաքի ոռոգելի տարածքը ավելի մեծ է քան սխեմատիկ գծագրում նշված տարածքը: Սակայն ինչպես մեր ծրագրի, այնպես էլ համայնքի տվյալ տարվա բյուջեն սահմանափակ է և հնարավոր չէ ավելի մեծ տարածք ներառել ծրագրում:
5	Արդյո՞ք կա խորքային հորի ջրօգտագործման թույլտվություն:	Այո:
6	Ինչպե՞ս է կազմակերպվելու բուստերային պոմպի էլեկտրասնուցման հարցը:	Ինչպես ներկայացված է ծրագրի հայեցակարգում, հին համակարգը պետք է փոխարինվի երկաստիճան համակարգով: Նախատեսվում է բաժանել բարձրադիր և ցածրադիր գոտիների: Բուստերային պոմպ կտեղադրվի միայն բարձրադիր գոտու համար, և էլեկտրասնուցումը կիրականացվի հարևան սպորտդպրոցից:
7	Ինչպե՞ս է նախատեսվում իրականացնել ոռոգումը:	ԳԱՏՕ ծրագրի և քաղաքապետարանի պատկերացումներով, ոռոգման համակարգը պետք է լինի հնարավորինս պարզ: Դիմող կազմակերպությունները կներկայացնեն իրենց առաջարկները:
8	Արդյո՞ք ոռոգումը լինելու է սովորական, մակերեսային, թե՞ նախատեսվում է անձրևացման համակարգ տեղադրել:	Ոչ, անձրևացման համակարգը ձեռնտու չէ այս տարածքի համար: Նախատեսվում է տեղադրել պարզ, մատչելի և դիմացկուն համակարգ:
9	Արդյո՞ք ծավալաթերթը և նախահաշիվը պետք է ներկայացվեն առանձնացված:	Այո:
10	Արդյո՞ք նախատեսվում է բակերում ջրաչափեր տեղադրել:	Չի նախատեսվում ջրաչափ տեղադրել:

